ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

3-ը մայիսի 2023թ.

Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի ուղերձը
մամուլի ազատության համաշխարհային օրվա առիթով

1993թ.-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից մայիսի 3-ը հռչակվել է որպես Մամուլի ազատության համաշխարհային օր, որը նշվում է նաև Հայաստանում:

Հանրության համար մամուլը կարևոր և պատասխանատու գործառույթ է իրականացնում. աշխարհում և հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հասարակությունը մեծապես տեղեկանում է մամուլի միջոցով, վստահում և լրատվության հիման վրա ձևավորում կարծիք, ուստի լրատվամիջոցը մեծապես պետք է գիտակցի իր գործունեության ազդեցիկ դերը հասարակական կյանքում: Մասնագիտական բարձր պատրաստվածությամբ լրատվամիջոցները պետք է իրականացնեն ոչ միայն իրազեկման աշխատանք, այլև նպաստեն առողջ ու հանդուրժող հանրային մթնոլորտի ձևավորմանը:

Մամուլի ազատությունն ու անաչառությունը ամենից կարևոր ու գնահատելի հատկանիշներն են: Անձանց և դեպքերի վերաբերյալ անկողմնակալ, ճշգրիտ, հիմնավոր տեղեկատվություն փոխանցելը խոսում է լրագրողի և լրատվամիջոցի պրոֆեսիոնալիզմի մասին:

Հարգելի՛ լրագրողներ, համացանցային լրտավամիջոցների և հեռուստատեսության աշխատակիցներ.

Մամուլի միջազգային օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում եմ անկողմնակալ, հավաստի ու վստահելի գործունեություն: Առանձնահատուկ շնորհավորում եմ Կոտայք TV մարզային հեռուստաընկերությանը, որն ակտիվորեն հետևում է համայնքի կյանքին և մշտապես անդրադառնում կարևոր իրադարձություններին, մաղթում եմ անխափան եթեր և ստեղծագործական հաջողություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ